ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«24» օգոստոսի 2017 թվականի № 105-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՈՐՈՇ ՀԱՆՁՆԱՐԱՐԳՐԵՐ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԹԻՎ 200011 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 445-Ն որոշման 14-րդ և 15-րդ կետերը, համաձայն որոնց՝ 2017 թվականի օգոստոսի 20-ից լուծարվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ընդերքի պետական տեսչությունը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և 75-րդ հոդվածով.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2016 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 200014, 2017 թվականի հունիսի 22-ի թիվ 200015 և 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 200020 «Ստուգում անցկացնելու մասին» հանձնարարագրերը.

2. Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2017 թվականի մայիսի 3-ի թիվ 201 և 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 202 «Վերստուգում անցկացնելու մասին» հանձնարարագրերը.

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2017 թվականի մայիսի 4-ի «Ստուգում անցկացնելու մասին» թիվ 200011 հանձնարարագիրը.

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ